Հաստատված է
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և
Սպորտի պետական ինստիտուտ»
Հիմնադրամի գիտական խորհրդի
«27» 03 2019թ. № 10 նիստում

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖՍԿՊԻ) գործունեությունը սկսվում է 20-րդ դարի կեսերից, Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո: 1945 թվականից բուհն ըստ էության Հայաստանի միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն է եղել և մինչև այսօր որպես այդպիսին միակն է՝ իր գործունեությամբ եվ առաքելությամբ: Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոնը ստեղծվել է 2016 թվականին: ՀՖԿՍՊԻ–ի համար այժմ առաջնահերթ է դառնում ինտեգրվել միջազգայնացման գործընթացին, որն անկասկած կնպաստի բուհի ճանաչմանը, համադրելիության և մրցունակության ապահովմանը: Այս համատեքստում կարևոր է հասկանալ, որ միջազգայնացումը միտված է ոչ միայն խթանելու ուսանողների շարժունությունը, այլ նաև իրականացնելու ՀՖԿՍՊԻ–ի ռազմավարական պլանի առաքելությունը, խնդիրներն ու նպատակները, որի արդյունավետությունը կնպաստի բուհի ընդհանուր ուսումնական գործընթացի զարգացմանը: ՀՖԿՍՊԻ–ի միջազգային և գիատատեղեկատվական կենտրոնը, մեկուսացված չի կարող գործել,այն առնչվում է ուսումնական գործընթացի հետ և համատեղ աշխատանքի շնորհիվ իրականացնում է ՀՖԿՍՊԻ որդեգրած առաքելությունը. այն է՝ խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում, ՀՖԿՍՊԻ-ի ռազմավարական պլանում (2016-2020) նկարագրված նպատակների, նախատեսված է միջազգայնացման գործընթացի ներդրման և զարգացման, որակի մշակույթի տարածման և շարունակական բարելավմանն ուղղված գործողությունների իրականացման համար:

Ինստիտուտի միջազգայնացումը մի շարք հստակ սահմանված գործընթացների իրագործումն է, ինչպես նաև որոշակի արդյունքների միջոցով սահմանված խնդիրների լուծումը:

Ընդլայնել և բազմազանել ինստիտուտի միջազգային կապերը, խթանել միջազգայնացման գործընթացները Եվրոպական, ԱՊՀ, ԵԱՏՄ և այլ երկրների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ուսումնական հաստատությունների հետ ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում: Ստեղծել անհրաժեշտ պայմաններ և ինստիտուտը դարձնել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի օտարազգի ուսանողների ուսուցման մրցունակ կրթօջախ:

Սույն քաղաքականության իրականացման համար պատասխանատու են ինստիտուտի ռեկտորը, միջազգային և գիտատեղեկատվական բաժնի ղեկավարը, որակի ապահովման բաժնի և ուսումնական բաժնի պետերը, ֆակուլտետի դեկանները:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

- Իրականացնել դասախոսների և ուսանողների շարժունությանը նպաստող միջազգային փոխանակման ծրագրեր:
- Նպաստել օտարերկրյա հրավիրված դասախոսների ու անվանի մարզիչների, մասնագետների պարբերաբար այցելություններն ինստիտուտ և ընդլայնել նրանց մասնակցության շրջանակները:
- Ակտիվացնել և ընդլայնել միջազգային կառույցների և հաստատությունների հետ համագործակցության շրջանակները:
- Բարելավել դասախոսների, ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակը՝ վերանայելով դասընթացների ծրագրերը և մեթոդաբանությունը:
- Զարգացնել և ընդլայնել միջազգային ամառային դպրոցի աշխարհագրությունը՝ բազմազան դարձնելով կրթական, սպորտային և մշակութային ծրագրերի բովանդակությունը:
- Գործընկեր համալսարանների հետ կնքված համագործակցության պայմանագրերի, փոխըմբռնման հուշագրերի կնքում, վերահսկողություն և կիրառման արդյունավետ մեխանիզմների ներդրում:

- Արտերկրի առաջատար կրթագիտական կենտրոնների հետ գործընկերային կապերի ստեղծում և զարգացում:
- Միջազգային դրամաշնորհային ծրագրերին ինստիտուտի մասնակցության ապահովում:
- Փոխանակման ծրագրերին ՀՖԿՍՊԻ-ի ուսանողների մասնակցության ապահովում,
- Օտարերկրյա ուսումնառողների ներգրավման համալիր միջոցառումների մշակում:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Մշակված միջազգայնացման քաղաքականություն՝ հստակեցված համագործակցության ուղղություններով և նպատակներով, գործողություններով և վերջնարդյունքներով:
- Միջազգային փոխանակման ծրագրերին մասնակից դասախոսների և ուսանողների թվի աճ:
- Հրավիրված օտարերկրյա դասախոսների և մարզիչների թվի աճ:
- Միջազգային կառույցների և ուսումնական հաստատությունների հետ գործող համագործակցության պայմանագրերի թվի աճ:
- Կրթական ծրագրերում և դասախոսների վերապատրաստման դասընթացներում անգլերենի ժամաքանակների ավելացում:
- Ամառային դպրոցներում ընդգրկված մասնակիցների թվի աճ և աշխարհագրության ընդլայնում:

  Ընդլայնել ինստիտուտի միջազգային գիտական համագործակցությունը, ձգտել ինստիտուտի ներգրավվմանը Եվրոպական, ԱՊՀ, ԵԱՏՄ և այլ երկրների հետազոտական տարածքին:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

- Շարունակել խթանել ինստիտուտի գիտական համագործակցությունը արտասահմանյան առաջատար բուհերի և գիտական կենտրոնների հետ:
- Աջակցել ինստիտուտի գիտամանկավարժական կազմին և ասպիրանտներ ընդգրկելու միջազգային գիտականտարբեր նախագծերում, ցուցաբերել անհրաժեշտ

տեղեկատվական աջակցություն միջազգային ֆինանսավորման աղբյուրների որոնման և հայտերի մշակման ուղղությամբ:

- Աջակցել երիտասարդ դասախոսների գիտական փորձի փոխանակմանը առաջատար բուհերում, գիտական կենտրոններում և ապահովել նրանց փորձի ակտիվ ներդրումը ինստիտուտում:
- Նպաստել դասախոսական կազմին արտասահմանյան գործընկերների հետ համատեղ գիտահետազոտական աշխատանքների կատարմանը:
- Աջակցել արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում հոդվածների հրատարակմանը և միջազգային ներկայացուցչական **գիտաժողովների մասնակցությանը:**

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Արտասահմանյան առաջատար բուհերի և գիտական կենտրոնների հետ գործող հետազոտական ծրագրեր:
- Գիտամանկավարժական կազմի և ասպիրանտների բավարարվածությունը բուհի տրամադրած աջակցությունից:
- Երիտասարդ դասախոսների գիտական ստաժավորման նպատակով միջոցառումների պլան և հաշվետվություններ:
- Համատեղ գիտահետազոտական ծրագրերի պլաններ և հրատարակություններ:
- Գիտական հանդեսներում հոդվածների հրատարակության և միջազգային գիտաժողովների մասնակցության համար տրամադրված ֆինանսական միջոցների աճ:

Նպաստել բուհում օտարերկրյա ուսանողների ու ասպիրանտների համակազմի աճին:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

- Ընդլայնել ընդունելությանը մասնակցող հնարավոր երկրների ցանկը, աջակցել ամբիոններին ու ֆակուլտետներին՝ ծավալելու դիմորդների հավաքագրման աշխատանքներն այլ երկրներում:

- Ինստիտուտի կայք էջում ներկայացնել օտարերկրյա ուսանողների ուսումնառության պայմանները և լայնորեն լուսաբանել նրանց կրթական հաջողությունները:
- Ստեղծել նպաստավոր պայմաններ և հնարավորություններ ինստիտուտի ուսանողական հանրությանը օտարերկրյա ուսանողների լիարժեք ինտեգրմանհամար, բացահայտել և հաշվի առնել օտարերկրյա ուսանողների առաջնային կարիքները՝ կացության ապահովումը, կողմնորոշումը և այլն:
- Հայաշակերտների միջոցով իրականացնել սփյուռքահայ դիմորդների ներհոսքը խթանող ակտիվացնող աշխատանքներ՝ այդ նպատակի համար օգտագործելով նաև ամառային դպրոցը:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Արտասահմանցի դիմորդների թվի աճ և նրանց հավաքագրման աշխարհագրության ընդլայնում:
- Արդիականացված վեբ կայք՝օտարերկրյա ուսանողներին նվիրված առանձին բաժնով:
- Լրամշակված եռալեզու ուղեցույցներ, նոր տեսաերիզներ և տեսանյութեր՝ նախատեսված արտասահմանցի ուսանողների համար:
- Սփյուռքահայ դիմորդների թվի աճ:
- Միջազգայնացման գործընթացի ամենակարևոր կետերից է բենչմարքինգը/ համեմատական վերլուծություն/:
- Բենչմարքինգի քաղաքականության հիմնական խնդիրնեն են.
- Վերլուծել բուհի գործունեությունը, գնահատել տարբեր գործընթացների ուժեղ և թույլ կողմերը:
- Հաշվի առնել ներքին և արտաքին շահակիցների ակնկալիքները, բացահայտել խնդիրները և այդ խնդիրների հետևանքները:
- Որոշել սկզբնական մակարդակը որում գտնվում է բուհը,
- Վերլուծել առաջատար բուհերի բենչմարքինգի արդյունքները դարձնելով գործիք բենչմարքինգի իրականացման համար:

ՀՖԿՍՊԻ –ի բենչմարքիգի քաղաքականության իրականացման սկզբունքներն են.

- Համաձայնություն - ունենալ փաստացի համաձայնություն տրամադրվող տեղեկատվության հրապարակայնացման աստիճանի վերաբերյալ:
- Նույնականացում – համեմատել նույն ոլորտները:
- Չափում – համադրել մի քանի բուհերի արդյունքները:
- Հավաստիություն – Բենչմարքինգը հիմնավորել փաստերով և վերլուծություններով:
- ՀՖԿՍՊԻ–ի բենչմարքինգի քաղաքականության իրականացման մեխանիզմներն են.
- Սեփական գործունեության ինքնավերլուծություն, հաջողության առանցքային գործոնների բացահայտում:
- SWOT- վերլուծություն, ուժեղ և թույլ կողմերի բացահայտում, բուհի ուսումնական գործընթացի կառավարման բոլո ոլորտներում:
- Առաջատար բուհի ընտրում և տվյալների հավաքագրում:
- Բուհի և առաջատար բուհի առանցքային ցուցանիշների համադրում, վերլուծություն, լավագույն փորձի ներդրում:
- Բուհի շահագրգռվածության, առկա բավարար պայմանների և համապատասխան ներուժի շնորհիվ միջազգայնացման իրականացում. Դեմինգի շրջափուլի սկզբունքներին համապատասխան, որը նախատեսում է.

1) Գործընթացի պլանավորում
2) Տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն
3) Վերլուծության արդյունքների հիման վրա համապատասխան գործընթացների իրականացում
4) Ստացված արդյունքների չափում, դիտարկում և գնահատում: